



ԱՄՆ-ՈՒՄ

Armenian


Power

ՀԱՄԱՅՆ

ՀԱՄԱԲՈՒՄ

ՀԱՄԱԿՐԻՄ

ՀԱՄԱԿՐԻՄ



UNITED STATES DISTRICT COURT

FOR THE CENTRAL DISTRICT OF CALIFORNIA

June 2010 Grand Jury

UNITED STATES OF AMERICA, ) No. CR 11 00072

Plaintiff, ) I N D I C T M E N T

v.

- MHER DARBINYAN, aka "Mike," aka "Hollywood Mike," aka "Little Mike," aka "Capone," aka "Caps," aka "Maher,"
- PARAMAZ BILEZIKCHYAN, aka "Parik," aka "P," aka "Parnamas Bileziktsian," aka "Bleziktsian Paramas,"
- KARO YERKANYAN, aka "Guilty," aka "Gator," aka "Kane,"
- ARMAN SHAROPETROSIAN, aka "Horse," aka "Dzi,"
- HAYK KARAYAN, aka "Hayko," aka "Whisper,"
- ARMAN TANGABEKYAN, aka "Spito," aka "Spitak," aka "Villager," aka "Thick Neck," aka "Armancho,"

[18 U.S.C. § 1962(d): Racketeer Influenced and Corrupt Organizations Conspiracy; 18 U.S.C. § 1201(c): Conspiracy to Commit Kidnapping; 18 U.S.C. § 1201(a): Kidnapping; 18 U.S.C. § 1951(a): Conspiracy and Interference with Commerce by Threats and Violence; 18 U.S.C. § 1344: Bank Fraud; 18 U.S.C. § 1028A: Aggravated Identity Theft; 18 U.S.C. § 1029: Access Device Fraud; 18 U.S.C. § 371: Conspiracy; 18 U.S.C. § 1001(a)(2): False Statement; 18 U.S.C. § 1014: False Statement on a Loan Application; 18 U.S.C. § 1028: Identity Theft; 21 U.S.C. § 846: Conspiracy to Manufacture and Possess with Intent to Distribute Marijuana; 21 U.S.C. §§ 841(a)(1), (b)(1)(B)(vii), (b)(1)(C): Manufacture and Possession with Intent to Distribute Marijuana; 18 U.S.C. § 1955: Conducting Illegal Gambling Business; 18 U.S.C. § 922(g)(1): Felon in Possession of a Firearm/Ammunition; 18 U.S.C. § 2: Aiding and Abetting]

# ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Համայնք**
- 4 **Ռամազանը՝ ծովի եւ աղօթքի ամիս**
- 5 **Սերժ Թանկեան՝ կանխել Թեղուտի անտառների ոչնչացումը**  
Արթուր Պապեան
- 6 **Հայաստանի բնակչությունը աճել է 0.4 տոկոսով**  
Կարլեն Ասլանեան
- 7 **16-րդ դարի խաչքարի յայտնաբերումը**  
**Գիլիջանում**  
Արմինե Մելիք-Իսրայելեան
- 13 **Օմար Խայեամի աշխարհայեացքը**  
Յովսէփ Միրզայեան
- 16 **Սկսում են դանդաղ մահանալ**  
Պարլօ Ներուդա
- 18 **Մտորումներ կա՞նում «Ազատ զոյգ»**  
**ներկայացման մասին**  
Հայնուշ Ջահանեան
- 20 **Փոքրիկ Ռուսաստան՝ Հայաստանի հիւսիսում**
- 24 **Միասնությունն սպորտով**  
Արման Տ. Ստեփանեան
- 27 **Ժամանց**

Մշակութային եւ Հասարակական

# Յոյս

Երկշաբաթաթերթ

Ե տարի, քիւ105, Օգոստոս 24, 2011,  
1200 քուման  
Հայաստանում 320 դրամ



- 8 **«Արմենիան Փաւրը» / Հայկական ՌԺՖ**  
Ռ.Ս.
- 8 **ԱՄՆ-ում քախջախել է «Հայկական ՌԺՖ» խմբաւորումը**  
Վլադիմիր Կոզլովսկի
- 11 **Հայկական ՌԺՖ-ն էլ է մաֆիա**  
Անի Գեւորգեան

## Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

- 2 **Այս համարի հայերեն էջերում**
- 4 **Չորագիւղի կանանց դժուարին կեանքը**  
Գաիյանէ Աբրահամեան
- 6 **Մարգարիտ Սարգսեան՝ Թեհրանի առաջին մանկապարտէզի հիմնադիրը**  
Լիա Խաչիկեան
- 8 **Հայ ժամանակակից նկարիչներ՝ Արեւ Պետրոսեան**
- 10 **«Աղա Իււէֆ» ֆիլմում հայ ընտանիքի տեսարանի մասին**
- 12 **Լեւոն Շանթի «Ընկած բերրի իշխանուհին» պարսկերէնով**

<p><b>Յոյս</b></p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօճատը՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինե Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարվեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերեն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p><b>Կայք</b> Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 <b>66495180 66492693</b></p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ <b>66495208</b></p> <p><b>hooyo@inbox.com</b> <b>www.hooyo.com</b></p>
--	---	---	---

## ՇԱՀԻՆ ՇԱՀՐ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԹԻՄԸ ՀՐԱԺԱՐԻՆ Ե ԽԱՂԱԿ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԻՄԻ ՀԵՏ

«Համահայկական խաղերի շրջանակներում Իրանի Շահին Շահր քաղաքի ֆուտբոլային թիմը վիճակահանութեամբ Օգոստոսի 14-ին պէտք է հանդիպէր Իսրայէլի հայազգի քաղաքացիներից կազմած Երուսաղէմի թիմի հետ: Շահին Շահրի թիմը, սակայն, այդպէս էլ խաղադաշտ դուրս չի եկել, եւ դրա պատճառը եղել է քաղաքական:

Իրանից ժամանած բոլոր խմբերի պատասխանատու Ալֆրեդ Յաւանը, որը նաեւ Համահայկական խաղերի կազմկոմիտէի անդամ է, տեղի ունեցածը մեզ հետ զրոյցում «թիրիմացութիւն» կոչեց: «Դա լոկ թիրիմացութիւն էր: Ընդհանրապէս պարսկական խմբերը որեւէ հանդիպման Իսրայէլի խաղացողների հետ չեն մասնակցում, եւ իրանահայ թիմը թիրիմացաբար մտածել է, որ այս անգամ էլ չպէտք է մասնակցեն: Բայց յետոյ իրենց ուշադրութիւնը հրաւիրեցինք, որ Երուսաղէմից եկածը նախ հայկական խումբ է եւ որեւէ կապ չունի այդ մտածմունքի հետ: Երկրորդը՝ պարսիկ կառավարութիւնն ընդհանրապէս մտածում է, որ Երուսաղէմը պատկանում է քրիստոնեաներին, մուսուլմաններին եւ մոսկիսականներին, իսկ նրանց (Շահին Շահրի թիմի) արարքը աւելի շատ հաստատում է, որ Երուսաղէմը Իսրայէլինն է: Եւ դա հակառակ էլ է իսլամական մտածմունքին: Այսինքն՝ մեր Իրանի ղեկավարութեան մտածմունքին», - ասաց Ալֆրեդ Յաւանը:

Նա վստահեցրեց, որ եթէ առաջիկայում եւս այնպէս պատահի, որ իրանական որեւէ խումբ հանդիպում ունենայ Երուսաղէմի թիմի հետ, իրենք անպայման պէտք է մասնակցեն դրան: «Ոչ մի կասկած», - յայտարարեց Յաւանը: Վերջինիս խօսքով, ինքը նախա-

պէս չի իմացել, որ Շահին Շահրի թիմը հրաժարւելու է մասնակցել խաղին: «Եթէ իմանայի, կը պարտադրէի, որ խաղար: Տեղի ունեցածը բացարձակապէս թիմի պատասխանատուի սխալն է եղել, որովհետեւ որոշողը ես պիտի լինէի, ես պիտի ասէի՝ խաղացէք կամ մի խաղացէք: Իրենք իրենց զլխու են արել, ես էլ իրենց հարցրի, ինձ բացատրութիւն տուցին, որ ինչ է: Ասացի, որ եթէ սրանից յետոյ Երուսաղէմի որեւէ թիմի հետ խաղ ունենան, անպայման խաղան», - նշեց Ալֆրեդ Յաւանը:

Սիւսի հատուած «Հայկական ժամանակ» կայքի հաղորդագրութիւնից: Այս միջադէպի մասին «Իրանահայեր» կայքը հարց է ուղղել Շահին Շահր քաղաքի վարչութեան պատասխանատու պրն. Ջանիկ Թահմազեանին.

«Պրն. Թահմազեան, ձեր ֆուտբոլի հաւաքականը բոյկոտեց Երուսաղէմի հաւաքականի

հետ մրցութիւնը, որն անսովոր դէպք էր Համահայկականում: Ինչո՞ւ նման քայլի դիմեցիք: Արդե՞օ՞ք այդ հաւաքականը ձեր կարծիքով Իսրայէլ էր ներկայացնում:

-Նախ ներողամտութիւն ենք հայցում մեր կամքից անկախ առաջացած այս պրոբլեմի համար: Պէտք է ասեմ նաեւ, որ ապագայում Սեւան ֆուտբոլի ակումբի (որ Համահայկական մրցութիւններում մասնակցում էր Շահին Շահրի անուն ներքոյ), համար բարդութիւններ չառաջանալու մտահոգութիւնից ելնելով մենք պարզապէս դիմեցինք պետական կողմի վերաբերմունքը ճշտելու, իհարկէ, յիշեցնելով իրենց, որ այս խաղերը համահայկական են եւ իւրաքանչիւր հաւաքական ներկայացնում է իր երկրի հայկական համայնքը: Բայց ըստ երեւոյթին մեր բացատրութիւնները ճիշտ չի ընկալւել ինչ-որ պատասխանատուի կողմից, որն մեզ



# ԵՐԿՈՒ ԳՐԱՌՈՒՄ ԼԵԶԻԱՅԻՆ ՃԻՇՏ ՈՒ ՍԽԱԼԻ ՄԱՍԻՆ

*Լեւոնիկ Սարվարեան*

յորդորեց չմասնակցել այդ մրցութեան: Այստեղ իհարկէ, ազդեցիկ դեր ունեցաւ նաեւ դրօշմերի եւ յատուկ այս դէպքում Իսրայէլի դրօշի ծածանումը, որն աւելի բարդացրեց խնդիրը: Այս էր ցաւալի իրականութիւնը, այլապէս աշխարհի բոլոր քաղաքներից ժամանած հայկական խմբերն էլ մեզ համար սիրելի են եւ յարգելի»:

Այս դիպքին անդրադարձել է նաեւ «Յայելի» կայքը.

«Փորձեցինք ճշտել, թէ ինչ է պատահել: Պարզուում է, որ Շահին Շահրի մարզիչը, որն ի դէպ Զուղայի Սեւան ֆուտբոլային թիմի մարզիչն է ու թիմն էլ հենց Սեւան թիմն է, երբ իմանում է, որ պէտք է խաղայ Երուսաղէմի թիմի դէմ, որոշում է, որ պէտք է ճշտել դրա քաղաքական հետեւանքները իր եւ իր թիմի համար: Մոռանալով, որ այն խաղերը, որին մասնակցում է համահայկական է եւ ամբողջովին զուրկ է քաղաքական ենթատեքստից կապ է հաստատում պետական պաշտօնեաների հետ: Նա դարձեալ մոռանում է, որ, եթէ նոյնիսկ չնչին մտահոգութիւն կար այդ առումով, կարելի էր նախ զանգել պատկան թեմի Առաջնորդարան կամ էլ Հարաւային իրանահայութեան Պատգամաւորին: . . . Հիմա, զաւեշտալի ու տհաճ իրադրութիւն է ստեղծել իրանահայ միւս մարզիկների, մեր իրանահայերիս ու նոյնիսկ Իրանի պետութեան համար, թէ իբր մենք չենք կարող նոյնիսկ ֆուտբոլ խաղալ Երուսաղէմի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Բայց ախր այս ամենից կարելի էր խուսափել միայն «աշից տաք քասայ» չդառնալու կամ առաջին հեռախօսազանգը ճիշտ ուղղութեամբ կատարելու դէպքում»:

## ԽՂՃՍՏԱՆՔԸ ՇՕ ԿՈՏՈՇ ԶՈՒՆԻ

Իմ գլուխը չի՛ էլ մտնի :

Ժամանակին Պ. Սեւակն իր մի յօդուածում, որ ես սրճագոյնակազմ իր Ե հատորում եմ կարդացել, ա՛յսպիսի մտածում ունի՝ կամ «հագնել տալ» կամ «հագցնել» ու երբեք՝ «հագցընել տալ»: Աւելի ուշ կարդացի, որ Լ. Հախվերդեան թումանեանագետը «նա» դերանունը լոկ շնչաւորին չի տալիս, այլ դա նաեւ անշնչին վերաբերող է համարում :

Սովորել ու սովորեցրել եմ, որ հայերէնի գերադրական ածականն երկու միջոցով է «սարքում»՝ ա ) ԱՄԵՆԱ ք) ԱԳՈՅՆ: Բայց: Բայց արի ու լալով տես, որ քիչ չեն տգէտներն ու մեծագարները, ովքեր փիսոյի մլաւոց չեն համարում ո՛չ սա , ո՛չ երկրորդն ու երրորդը:

Գոնէ ես չգիտեմ, թէ ով ինչ է կարդացել, ինչը՝ ոչ: Իսկական գէլի աշխարհ:

Ախր սխալը միշտ մէկն է, ու երանի~ նա, ով հայւան չի գրի կամ ասի ի՛ր ճիշտն, որ ուրիշն էլ մի բան հասկանայ ...

Հասկանանք ու ծալպակաս չվարենք:

Չէ՛, պարզող չկայ, պարզաբանող էլ եօխդուր: Պատճառականի ու դերանուն մասին ...

Ի վերջոյ ոչ Սեւակը, ոչ էլ Հախվերդեանը չեն ընկել երկմից:

Պարոյր Սեւակ վիթխարու դիտումն ինձ աներկբայ է թուում, իսկ

թումանեանագէտ գերխելացունը խոկման արժանի : Վերստին մտածել, նորից վարել:

Լոս Անջըլէս (Գլենդէլ) ,  
Յնս/14 /2011 թ .

## ԱՐԾԱՐԾՈՒՄ

Ընդամենը բանաստեղծ Վահագն Դաւթեանի երկի շնորհիւ ոչ վաղուց իմացայ, որ «արծարծել» բառը տարածում ունեցածից բացի ունի ուրիշ՝ կիսահանգած կրակը կրկին վառելու իմաստ: Մեր մէջ ցաւօք տարածւած բառասխալների մասին գրագէտ մէկի ասածն էր. - Շատերն են ասում, որին ի պատասխան ես. - Այո , դա մահապատժի ենթակայ չէ, բայց սխալը սխալ է:

Այստեղ էլ եմ շատերից լսում համարեա նոյնը: «Գալացող», «պարացող» ...

Նախորդ տողի երկու սխալները տառապեցնում են ինձ, երբ դրանք Թեիրանում բարբաջում էր անձ, ով լծւած էր կրթելու:

Հիմա էլ ա՛յս տողերն եմ գրում, եւ ինքս հօ սխալներս չգիտեմ, բայց մի՞թէ պիտի լռի քաղաքավարին, ով սրա՛նք կը կարդայ: Ո՛չ, ո՛չ, հազար ոչ, ընդամենը քաղաքավարութիւնն է պարտադիր:

Լոս Անջըլէս (Գլենդէլ) ,  
Մրտ/3 / 2011



# ՌԱՄԱՉԱՆԸ` ԾՈՄԻ ԵՒ ԱՂՕՔԹՔԻ ԱՄԻՍ

«Պահք կամ պաս նշանակում է հրաժարել որոշ տեսակի կերակուրներից, յատկապես մսեղենից, կաթնեղենից, ձկնից, եւ նւիրել զղջունի, ինքնաքննութեան եւ ապաշխարութեան»:

Ահա մի հատուած Արտակ Արք. Մանուկեանի «Հայ եկեղեցու սօները» գրքից, որն արդէն վկայում է այն մասին, թէ պահքի` ուտելուց հրաժարելու փիլիսոփայութիւնը զանազան կրօններում համրեա թէ նոյնն է, թէն ձեւերը եւ մանրամասնութիւնները կարող են միմեանցից տարբերել: Այս օրերին մահմեդականների ծոմի ամիսն է, որը բնորոշուում է լուսաբացից մինչեւ մայրամուտ որեւէ բան ուտելուց ու խմելուց, նոյնիսկ ծխելուց հրաժարելով: Երեկոյեան, մութն ընկնելու պահին, հաւատացեալ ծոմապահները, դադարեցնում են պահքը եւ սկսում են ու-



տել, յաճախ խմելով մի բաժակ թէ՛ մի քանի հատ արմաւով: Դրանից մի քանի ժամ անց, բացուում է *էֆթարի* սփռոցը, որի շուրջ ընտանիքի անդամները հաւաքուում են աւելի յաճախ քան տարւայ միւս ամիսները: Թեհրանը, ինչպէս նաեւ Իրանի միւս քաղաքները, երեկոյեան տարբեր տեսք են ըմդունում: Հարիւրաւոր խանութներ *Աշէ Ռեշթէ* (թանով ապուր) են վաճառում, որը նախկինում համարեա միշտ եփուում էր տներում, սակայն այսօրւայ քաղաքային կեանքը, այլեւս ժամ չի թողնում այդպիսի ժամասպառ խոհարարութեամբ զբաղելու: Իսկ անուշարաններում վաճառում են *զուլու-*

*բիա* եւ *քամիէ*, որոնք Ռամազանի յատուկ քաղցրեղեններն են: Այսպիսով կարելի է ասել, որ Ռամազանը ունի նաեւ իր ծիսական կողմը: Դա տօն է եւ երեկոյերին փողոցներում եւ ընտանիքներում կարելի է զգալ այդ տօնական տրամադրութիւնը: Ինչպէս որեւէ այլ տօն կամ ծէս, Ռամազանն էլ երբեմն շեղուում է իր բուն նպատակից եւ վերածուում ցուցամուտքեան ու շրայութեան: Այսպիսի հարցեր հանգամանօրէն արծարծուում ու քննադատուում են երկրի զանազան լրատւական միջոցների կողմից:

# ՍԵՐԺ ԹԱՆԿԵԱՆ՝ ԿԱՆԽԵԼ ԹԵՂՈՒՏԻ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՈՉՆՉԱՅՈՒՄԸ

Արթուր Պապեան



Ամերիկահայ ռոք երաժիշտ եւ երգահան, աշխարհահռչակ System of a Down խմբի մենբերգիջ Սերժ Թանկեանը, ով այս օրերին Հայաստանում է եւ թու՛նօ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում հանդէս է եկել համերգով, իր պաշտօնական կայքէջում կիսել է հայաստանեան այս այցի տպաւորութիւններով:

Աշխարհահռչակ երաժիշտը, մասնաւորապէս, պատմել է Լոռու մարզ կատարած իր այցի մասին:

«Ես ցնցւած էի այստեղի փարթան անտառներով, գետերով եւ գիւղական բնակավայրերով: Այս տարածքում է նաեւ Թեղուտի անտառը, որը կարող է ամբողջու-

թեամբ աւերել հանքարդիւնաբերութեան արդիւնքում, եթէ այն չդադարեցւի», - գրել է Սերժ Թանկեանը:

Երաժիշտը նաեւ իր երկրպագուներին առաջարկել է ծանօթանալ Թեղուտի անտառի խնդրին եւ օգնել կանխել, իր ձեւակերպմամբ՝ «հանքարդիւնաբերական աղէտը, որը կարող է կործանել բնական գեղեցկութիւնը, ռեսուրսները եւ կենդանական աշխարհի բազմաթիւ վտանգւած տեսակների բնակութեան վայրը»:

Երեք տարի առաջ Հայաստանի կառավարութիւնը արտօնեց ACP ընկերութեանը շահագործել Թեղուտի պղնձամոլիբդենային

հանքավայրը՝ դրական գնահատելով հանքավայրի շահագործման ծրագիրը եւ այն հռչակելով հանրային գերակայ ծրագիր, որն իրենից բնապահպանական ու առողջապահական վտանգներ չի ներկայացնում: Մինչդեռ, բնապահպանների բողոքները հակառակն են վկայում: Նրանք շարունակում են պնդել, որ հանքավայրի շահագործման արդիւնքում Լոռու մարզի Թեղուտ ու Շնող գիւղերն իրենց յարակից տարածքներով կը կանգնեն բնապահպանական աղէտի առջեւ:

«Ազատութիւն» ռադիօկայան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ԱՃԵԼ Է 0.4 ՏՈԿՈՍՈՎ

Կարլեն Ասլանեան

Ազգային վիճակագրական ծառայությունը մի շարք բացասական արդյունքներ է արձանագրել այս տարւայ առաջին կիսամեակի ժողովրդագրական ցուցանիշներում:

Մասնաւորապէս, 20.5 տոկոսով նւազել է բնակչութեան բնական յաւելւաճը: Ազգային վիճակագրական ծառայութեան Մարդահամարի եւ ժողովրդագրութեան բաժնի պետ Կարինէ Կուլիւմջեանի ծեւակերպմամբ՝ այս ցուցանիշը հեռու է անգամ պարզ վերարտադրութիւնը ապահովելու հնարաւորութիւնից:

2010 թւականի առաջին կիսամեակի համեմատութեամբ աւելացել են մահւան դէպքերը, անկում է ապրել ծնելիութիւնը:

«Կենդանի ծնունդների թիւը կազմել է 20 հազար 102: 2010 թւականի առաջին կիսամեակի տւեալների նկատմամբ 4.4 տոկոսով անկում է արձանագրել: Մահւան դէպքերը աճել են 3.2 տոկոսով, կազմել են 14 հազար 743, որից մինչեւ մէկ տարեկան մահերը մի փոքրիկ աճ ունենք՝ 1.2 տոկոսով», - նշեց Կուլիւմջեանը:

Ազգագրագէտ Զրանուշ Խառատեանը «Ազատութիւն» ռադիօկայանի հետ զրոյցում կարծիք յայտնեց, թէ երկրի ընդհանուր գործընթացների յենքի վրայ այս թւերը միանգամայն օրինաչափ են. - «Արտագաղթի այն տեմպերը, որ առկայ են մեր երկրում՝ իսկ մեկնող-

ները երիտասարդ տարիքի մարդիկ են... բնական է, որ մենք պէտք է ծնելիութեան նւազում ունենալինք: Եւ հաշւի առնելով, որ մեր երկրում բաւական ստրեսային պայմաններ են, իհարկէ, մահացողների թիւը նոյնպէս պէտք է աւելանար»:

Վիճակագրական ծառայութեան տւեալներով՝ Յուլիսի 1-ի դրութեամբ, Զայաստանի մշտական բնակչութիւնը կազմում է 3 միլիոն 266 հազար 400 մարդ, մէկ տարում 0.4 տոկոսի աճ է արձանագրել:

Մինչդեռ, ըստ Կարինէ Կոյումջեանի, բացասական է Զայաստանի ժամանող եւ Զայաստանից հեռացող Զայաստանի քաղաքացիների տարբերութիւնը՝ շուրջ 90 հազար մարդ. - «Դէպի ներս եղել են 368 հազար 753, եւ հանրապետութիւնից դէպի դուրս՝ 458 հազար 98 մարդ»:

Զրանուշ Խառատեանի խօսքով, չվերադարձողների այս թիւն ամբողջութեամբ պէտք էլ չէ արտագաղթին վերագրել, քանի որ այստեղ կայ սեզոնային աշխատանքի մեկնողների գործօնը:

Միեւնոյն ժամանակ ազգագրագէտը չի կարծում, թէ այս տւեալները տարեվերջին էականօրէն կը փոխեն: Թւերից գատ, Զրանուշ Խառատեանի խօսքով, շատ աւելի մտահոգիչ է երկրում ժողովրդագրական անհամամասնութիւնը,

որը ազգագրագէտը ճգնաժամային է որակում. - «Մեր վիճակագրութիւնը ոչ ունի հնարաւորութիւն, ոչ էլ վաւերացնում է, թէ սկզբունքօրէն բնակչութեան որակի մէջ ինչ փոփոխութիւն է տեղի ունենում՝ կրթութեան, որակեալ կրթութեան, աշխատանքային հմտութիւնների ունեցողների»:

7.2 տոկոսով աւելացել են ամուսնութիւնները, միայն 2011-ի առաջին 6 ամսւայ ընթացքում շուրջ 9400 զոյգ է ամուսնացել, բայց միեւնոյն ժամանակ արձանագրել է նաեւ ամուսնալուծութիւնների թիւի աճ մօտ 7 տոկոսով: 1500-ից աւելի զոյգ է բաժանւել, ամենաշատը Երեւանում եւ Լոռու մարզում:

Զայաստանի բնակչութեան 11.5 տոկոսը ծերեր են, մինչդեռ ՄԱԿ-ը գերազանցած է համարում ծերութեան արդէն 7 տոկոս ցուցանիշը:

«Ազատութիւն» ռադիօկայանի հարցին՝ մտահոգիչ չե՞ն արդեօք առաջին կիսամեակի այս արդիւնքները, Կարինէ Կուլիւմջեանը պատասխանեց. - «Ես կուզենայի, որ այս ցուցանիշները աւելի լաւ պատկեր ունենային»:

Ազգագրագէտ Զրանուշ Խառատեանի կարծիքով, այս թւերն առաջին հերթին կարելու են հետեւութիւններ անելու համար. - «Ես ակնյայտ տեսնում եմ, որ կառավարութիւնը այս խնդիրների վերաբերեալ ծրագրեր չունի»:



# 16-րդ դարի խաչքարի ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԴԻԼԻՉԱՆՈՒՄ

Արմինե Մելիք - Իսրայելեան

Օրերս Դիլիջան-Յաղարծին վանահամալիր տանող ճանապարհատառծիկն մերձ անտառահատաժույժ, իջեւանցի մեղապահ Վարուժան Սիմոնեանի ու նրա որդու կողմից գտնւել է մօտաւոր հաշարկներով 16-րդ դարի խաչքար:

Ջարդապատկերներով բաւականին ինքնատիպ այս մասունքը 1 մետր 60 սմ բարձրութեամբ էլ 70 սմ լայնութեամբ բազալտի կան-



գուն խաչքար է, որի վերին հատաժույժ մասնատուած է, սակայն կոթողը իր հրաշալի պահպանուած տեսքով բաւականին առիւնքնող է... Խաչքարի վրայ մեծադիր խաչի ներքին երկու անկիւններում զետեղուած են համեմատաբար փոքր չափերով խաչքարերը, որոնցից երկու աջ եւ ձախ ներքին անկիւնային, միջին մեծութեան խաչքարը ամուր բռնուած ձեռքերի վրայ են վեր պարզուած: Մեծադիր, կենտրոնական խաչի ներքին ան-

կիւններից սկիզբ են առնում 2 վերջաւորութիւնները պարուրած եւ զարդանախշեր, որոնք նոր յայտնաբերուած այս խաչքարին տալիս են կենաց ծառի տեսք, որի արմատները ձգուած են դէպի վար, իսկ վեր բարձրացուած երկու ուղեկցող խաչքարը նման են ջահերի, որոնց վրայ փոքրիկ կամարած եւ զարդանախշերը խորհրդաւոր իմաստ են ներշնչում... Խաչքարը երիզուած է պարանաձեւ հիւսկեն զարդաերիզով: Խաչ-

քարը կանգուն է եղել եւ նման չի իր տարածքում գտնուող տապանաքարերին, որոնք կիսով կամ համարեա ամբողջովին գետնի տակ են թաղուած եւ մամռապատ են, բացառութեամբ եւս երկու կանգուն եւ ոչ այնքան լապահպանուած, չափերով փոքր խաչքարերի...

Վայրը, որտեղից գտնուել է այս խաչքարը հաւանաբար եղել է հին գերեզմանատուն, այդ մասին են վկայում դեռեւս իրենց յայտնութեանը սպասող հողածածկ խաչքարերը, որոնցից մի քանիսը արդէն ենթարկուել էին «զանձեր որոնողների» «ինքնուրոյն պեղումներին»...

Նոր գտածոյի լուրն արդէն հասել էր ՀՀ լրատւամիջոցներին ու մեր նկարահանման պահին դէպի Դիլիջան էին շտապում «Հայ լուր» լրատւականի աշխատակիցները...



2011-ի Փետրուարին, Միացեալ Նահանգների լրատու-միջոցները հաղորդեցին «Արմենիան Փառք» (Հայկական ՌԻժ) կոչող յանցախմբի 70 անդամների ձերբակալման լուրը: Դա իհարկէ առաջին անգամը չէր, որ այդ հայ յանցագործ խումբը թէժ լուր էր դառնում: Ինչպէս ասում է, նրանց մեղադրանքների 212 էջանոց փաստաթղթում, նրանք իրենց գործունեութիւնը սկսել են 1980-ականների վերջերից: Նրանց անօրինական գործողութիւնների ղեկավարման ու կազմակերպման մասին տեղեկութիւններ կը գտնէք ստորեւ ներկայացած յօդուածներում: Սակայն կան նաեւ մի շարք կարեւոր հարցեր կապւած այս մաֆիոզ (կազմակերպւած յանցագործութիւն իմաստով) խմբի հետ.

Առաջին. այս խմբի պաշտօնական անդամների թիւը 250 հոգի է, այսինքն ԱՄՆ-ի հայկական համայնքի պարզապէս մի փոքր տոկոսը, սակայն ընդհանուր հանրային կարծիքի տեսակէտից քանակը այնքան նշանակութիւն չունի, եւ նա լսելով հայերից կազմւած այս յանցախմբի մասին, ակամայից գաղափար է կազմում ամերիկահայութեան եւ ընդհանրապէս հայութեան մասին: Սա ոչ միայն բացասական ազդեցութիւն կարող է ունենալ ԱՄՆ-ում ապրող հայերի առօրեայ կեանքի վրայ, այլեւ չի կարող անարձագանք մնալ ցեղասպանութեան ճանաչման նպատակով հայերի տարած աշխատանքների համար: Հայերը շատ ուշադիր պիտի լինեն (եւ են) իրենց բարի համբարը պահպանելու նկատմամբ, սակայն այսպիսի բացայայտումները, ինչ խօսք, չեն կարող չվնասել այդ բարի համբաւին:

Երկրորդ. ամերիկահայ համայնքի ղեկավարութեան համար պիտի հարց առաջանայ, թէ ինչո՞ւ մեծ թով հայ երիտասարդներ ներգրաւում են անօրինական աշխատանքներում: Կան տնտեսական, մշակութային եւ դաստիարակչական գործօններ, որոնք բոլորովին պարզ չեն եւ դժար է պարզել, քանի որ այս խմբի գործունեութեան

անօրինական լինելով, նաեւ դժար է հաւաստի եւ ստոյգ տեղեկութիւններ ձեռք բերել նրանց մասին:

Երրորդ. ըստ ոստիկանութեան բացայայտած տեղեկութիւնների, այս խմբի անդամները մեծամասնաբար հայաստանահայեր եւ ռուսահայեր են: Մի խօսքով, այստեղ եւս նկատելի է հայ համայնքի տարբեր հատւածների բաւականին մեծ տարբերութիւնները: Սակայն հայերը ընդհանրապէս իրենց ներկայացնում են որպէս հայ, անկախ նրանից թէ ո՞ր երկրից են գաղթել Ամերիկա: Բայց իրականում մեծ տարբերութիւն կայ Իրանից Ամերիկա գաղթած եւ Ռուսաստանից Ամերիկա գաղթած հայերի միջեւ: Դա նոյնիսկ ոստիկանութիւնը մասամբ հասկանում է, հաշի առնելով երկու տեսակ հայեր, հիմնւած նրանց ազգանունների վերջաւորութեան ուղղագրութեան վրայ՝ ի՞նչ է յար: Հայերը թէեւ իրենց մէջ ընդհանրապէս հասկանում են այս տարբերութիւնները - չէ որ այնքան պարզ ու բացայայտ են դրանք - բայց օտարի առջեւ եւ պաշտօնապէս անտեսում են այդ տարբերութիւնները, եւ մի խմբի անօրինական գործերը գրում են բոլոր հայերի հաշիւին:

Չորրորդ. խօսում է «Արմենիան Փառք»-ի եւ Հայաստանի Հանրապետութեան քաղաքական եւ տնտեսական էլիտայի միջեւ կապերի մասին: Դրանք, իհարկէ, կարող են պարզապէս ասէկոսէներ լինել եւ առայժմս հաւաստի տւեալներ չկան այս մասին, բայց, յամենայն դէպս, դա կարող է ազդել նաեւ Հայաստանի արտաքին քաղաքականութեան վրայ: Ասում է, որ յանցախմբի գործողութիւնների արդիւնքում ԱՄՆ-ի քաղաքացիները կորցրել են միլիոնաւոր դոլարներ: Իմիջիայլոց, ամերիկացիները շատ զգայուն են դրամային հարցերում եւ դժար են ներում իրենց թաւանողներին: Մի խօսքով այս լուրերը հաւանաբար բացասական անդրադարձ կունենան նաեւ Հայաստանի իշխանութիւնների վրայ:

Ռ.Ս.

## BBC` ԱՄՆ-ՈՒՄ ԶԱՆԶԱՆԻՒՄ Ե «ՀԱՅԿԱԿԱՆ ՌԻՇ» ԽՄԲԱՒՈՐՈՒՄԸ

Կալիֆորնիայի իշխանութիւնները հաղորդում են «Հայկական ՌԻՇ» (ՅՈՒ) անւամբ յայտնի կազ-

մակերպւած յանցաւոր խմբաւորման ջախջախման մասին: Այն ձեւաւորվել է 1980-ական-

Վլադիմիր Կոզլովսկի  
ներին Լոս-Անջելեսի շրջաններից մէկում՝ Իստ-Յոլիվուդում, սկզբից փողոցային բանդայի տեսքով, որը

ժ

# Armenian Power



կազմած էր հայերից ու խորհրդային բլոկի երկրներից ԱՄՆ ժամանած այլ ներգաղթեալներից ու դիմակայում էր միւս էթնիկ բանդաներին: Տարիների հետ այն վերածւեց ճիւղաւորւած յանցաւոր խմբաւորման:

-Հիմնադրման ամենասկզբից, ասւում է մեղադրական եզրակա-

ցութեան մէջ,-«Հայկական Ուժի» անդամները ու դրա հետ կապւած անձինք իրականացնում էին տարատեսակ յանցագործութիւններ բռնութեան կիրառմամբ՝ այդ թւում նաեւ սպանութիւններ, սպանութեան փորձեր, մարդկանց առեւանգումներ, թալան, շորթում եւ վկաների ահաբեկում, ինչպէս նա-

եւ թմրանիւթերի առեւտուր եւ խաբէութիւն:

Ձերբակալութիւնները «Լոյսի անջատում» անամբ ոստիկանական գործողութեան կուլմինացիան էր, որին մասնակցել է իրաւապահ մի քանի գերատեսչութիւն: Ձերբակալութիւններին մասնակցել է ընդհանուր առմամբ 700 հո-



«Հայկական ՌԺժ»  
յանցագործ խմբի  
70 անդամների  
ծերբակալման  
լուրը  
յայտարարելիս,  
FBI-ի գործակալ  
Ջոն Ջիլիզը ցոյց  
է տալիս խմբի  
ղեկավարներից՝  
փախստական  
Արմեն  
Մկրտչեանի  
(Աշոտի) նկարը:

գի, որոնցից շատերը սպառազին-  
ւել էին մետաղական սաղաւարտ-  
ներով եւ զրահաբաճկոններով:

**Լոս-Անջելեսի բաղաձայններ**

Ձերբակալւած խմբաւորման  
անդամներից շատերը բնակու-  
մ են Կալիֆորնիայի հարաւում, սա-  
կայն ձերբակալութիւններ են իրա-  
կանացել նաեւ Դենւերում եւ Մա-  
յամիում:

Հարաւային Ֆլորիդայում, ինչ-  
պէս հաղորդում է այնտեղի դաշ-  
նային դատախազ Ուիլֆրեդո Ֆե-  
րերը, ձերբակալւել է «Հայկական  
ՌԺժ» հետ կապ ունեցող 13 մարդ:

Նրանց մեղսագրուող յանցա-  
գործութիւնները վերաբերում են  
զէնքի վաճառքից մինչեւ կրեդիտ  
քարտերի ու բժշկական ապահո-  
վագրութիւնների հետ մեքենայու-  
թիւնների:

Մի քանի տասնեակ մարդ էլ  
ծերբակալւել է Կալիֆորնիայում,  
որտեղ բնակում են ամերիկահա-  
յերի մեծ մասը: Գործում ընդհա-  
նուր առմամբ աւելի քան 100  
մարդ է ներգրաւած: Առաջին օրը  
ծերբակալւել էր 81 մարդ, մօտ 25-  
ի նկատմամբ էլ հետախուզում է  
յայտարարել:

Լոս-Անջելեսի դաշնային դա-  
տարան ներկայացւած «Հայկա-  
կան ՌԺժ» գործով մեղադրական

եզրակացութիւնը կազմւած է 212  
էջից: Դրանից երեւում է, որ խմ-  
բաւորումը ունի մօտ 250 լիիրաւ  
անդամ ու հարիւրաւոր մեղսակից-  
ներ, որոնք պաշտօնապէս խմբա-  
ւորման անդամ չէին հանդիսա-  
նում:

Նրանց գործունեութեան կենտ-  
րոն է նշում Լոս-Անջելես դքսու-  
թիւնը՝ այդ թւում նաեւ Յոլիվուդը,  
ինչպէս նաեւ Գլենդէյլ, Բերբենկ  
քաղաքները եւ Արեւմտեան ու Հիւ-  
սիսային Յոլիվուդը եւ Վեն-Նայսը:  
Օրինակ, Գլենդէյլի բնակչութեան  
40 տոկոսը կազմւած է հայերից:

Խմբաւորման անդամները տի-  
րապետում են անզլերէնին, սա-  
կայն միմեանց միջեւ խօսում են  
հայերէն կամ ռուսերէն: Դատախա-  
զութեան կարծիքով, մասնակի-  
օրէն դա բացատրում է խօսակցու-  
թիւնների բովանդակութիւնը կողմ-  
նակի անձանցից թաքցնելու ցան-  
կութեամբ:

**Մեքսիկական մաֆիայի  
դաշնակիցներ**

Ինչպէս երեւում է դատական  
փաստաթղթերում, նախքան «Հայ-  
կական ՌԺժ» լիիրաւ անդամ դառ-  
նալը, անհրաժեշտ էր ինչ-որ ժա-  
մանակ «աշխատանք» կատարել  
խմբաւորման համար՝ այսինքն  
յանցագործութիւններ իրականաց-

նել:

Անդամագրման ծիսակատա-  
րութիւնը բաղկացած էր կարճա-  
տեւ ծեծից: Առանց դրա կարելի էր  
«Հայկական ՌԺժ» անդամ դառ-  
նալ, եթէ նորեկի համար երաշխա-  
ւոր հանդէս գար ՅՈՒ-ի մշտական  
անդամներից մէկը:

Բանդայի անդամներին կարելի  
է ճանաչել յատուկ դաջւածքնե-  
րով, մականուններով, զգեստով եւ  
այլն:

Առանձնայատուկ հեղինակու-  
թիւն էին վայելում ՅՈՒ-ի այն  
առաջնորդները, ովքեր երկարա-  
տեւ պատժաժամկէտներ էին կրել  
ու սերտ կապեր էին հաստատել  
ազդեցիկ բանտային խմբաւորում-  
ների հետ: Այդ բանդաների մէջ գլ-  
խաւոր տեղ է զբաղեցնում մեքսի-  
կական մաֆիան կամ «Եմէ»-ն  
(այսպէս է արտաբերում «Մ» տա-  
ռը իսպաներէնում):

«Հայկական ՌԺժ» այնքան  
սերտ էր կապւած մեքսիկական  
քրեական աշխարհի հետ, որ յա-  
ճախ այն անւանւում էր «ՅՈՒ-13»,  
քանի որ «Մ»-ը լատինական այ-  
բուբենի 13-րդ տառն է:

Դատախազների խօսքերով,  
մեքսիկական մաֆիան առաւելա-  
պէս վերահսկում է թմրանիւթերի  
առետուրը ու յանցաւոր այլ գոր-  
ծունեութիւն Կալիֆորնիա նահան-  
գի բանտերում եւ դաշնային ազա-  
տագրկման այլ վայրերում:

Հետաքննութիւնը պարզել է, որ  
իր բազմանդամութեան եւ մեքսի-  
կական մաֆիայի հետ կապերի  
շնորհիւ ՅՈՒ-ի առաջնորդները  
հաւասարը հաւասարի հետ են շփ-  
ւել աւանդական օրէնքով զողերի  
հետ, իսկ յաճախ նոյնիսկ յարձա-  
կումներ են գործել նրանց պաշտ-  
պանութիւնը վայելող անձանց  
վրայ:

**«Լոս-Անջելեսը պահում եմ  
եմ»**

Այստեղ արտայայտիչ է նրանց  
մեղսակցուող մի էպիզոդ՝ կապւած

երկու տուժածներից շորթելու դեպքի հետ, որոնց անունները դատական փաստաթղթերում կողաւորւած են որպէս «Ձ» եւ «Լ. Կ.»:

Առաջինը վայելում էր անանուն օրէնքով մի գողի հովանաւորչութիւնը, իսկ երկրորդը՝ գողի սանիկ էր: Այնուամենայնիւ, Դարբինեանը ծրագրել էր, ըստ դատախազների, յարձակում գործել երկուսի վրայ էլ հոլիվուդեան Chicken House ռեստորանում:

2009 թւականի Օգոստոսի 20-ին զանգահարել էր ՅՈՒ-ի միւս անդամներին՝ հաւաքագրելով մի մեծ խումբ, որը ներխուժել էր ռեստորան ու պատրաստում էր հաշլէ-յարդար տեսնել «Ձ»-ի եւ «Լ. Կ.»-ի նկատմամբ:

Հաղորդում է, որ խմբաւորման մօտ կար առնուազն հինգ զինատեսակ, այդ թւում նաեւ՝ 45 տրամաչափի Springfield Armory XD ատրճանակ, 40 տրամաչափի Sig Sauer ատրճանակ, 40 տրամաչափի Baby Desert Eagle ատրճանակ, 40 տրամաչափի Heckler & Koch USP ատրճանակ եւ 9 միլիմետրանոց 17-րդ մոդէլի Glock:

Յարձակումը խափանել էր ոստիկանութիւնը, որը անսպասելիորէն մտել էր ռեստորան: Յաջորդ օրը Դարբինեանը հեռախօսով մեղադրեալ Կարէն Ջաքարեանին ասել էր, որ չի հրաժարում «Ձ»-ին եւ «Լ. Կ.»-ին պատժելու մտքից այն բանի համար, որ «նրանք Լոս-Ան-

ջելեսում յանցաւոր գործունէութեան վերաբերեալ որոշումներ են կայացնում առանց իր համաձայնութեան»:

-Լոս-Անջելէսը ես եմ պահում.- իբր յայտարարել էր նա:

Օգոստոսի 27-ին Դարբինեանը մեղադրեալ Արամ Պետրոսեանին ասել էր, որ ինքը թքած ունի այն բանի վրայ, որ «Ձ»-ն վայելում է օրէնքով գողի հովանաւորչութիւնը:

Մեղադրական եզրակացութեան մէջ բերում են շորթման դեպքերի մի քանի էպիզոդներ, որոնցով իբր զբաղւում էր խմբաւորումը:

ՅՈՒ-ն նաեւ մեղադրում է այն բանի մէջ, որ վերջինիս անդամները «99c Only Stores» էժանագին խանութների ցանցի կասսային ապարատներում տեղադրում էին սարքեր, որոնք գնորդների կրեդիտ քարտերից արտատպում էին անձնական տւեալները հետագայ խարդախութիւններում օգտագործելու նպատակով:

ՅՈՒ-ի միւս անդամները զբաղւում էին կեղծ ստացականների կանխիկացմամբ: Դատախազութեան տեղեկութիւններով, ընդհանուր առմամբ խաբէութիւնների միջոցով «Հայկական Ռիժը» աշխատել է շուրջ 20 միլիոն դոլար:

Աղբիւրը՝ BBC  
21.02.2011

## «ՀԱՅԿԱԿԱՆ ՌԻՇ»-Ն ԷԼ Է ՄԱՏԻՎ

Անի Գեւորգեան

Վերջերս լրատամիջոցները ողողւեցին եւս մէկ հայկական յանցաւոր խմբի աւելի քան 70 անդամների ձերբակալման մասին լուրերով:

Պարզում է, որ ԱՄՆ-ում գործել են «Հայկական Ռիժ» խմբաւորման ներկայացուցիչները, որոնք, ամերիկացի իրաւապահների վկայութեամբ, իրենց գործունէութիւնը սկսել են ճախորդ դարի 80-ականներին եւ լուրջ կապեր ունեն մեքսիկական մաֆիայի հետ, մեղադրում են թմրանիւթերի տեղափոխման, բանկային մեքենայութիւնների, մարդկանց առեւանգման, չարտօնւած խաղատների գործարկման եւ դրամաշորթութեան մէջ: Ձերբակալւածների եւ դեռեւս չյայտնաբերւած կասկածեալների անունները դեռեւս չեն հրապարակւում: ԱՄՆ Հետաքննութիւնների դաշնային բիւրոյի հաղորդագրութեան մէջ նշւած է նաեւ, որ քննութեան ընթացքում պարզւել է, որ նշւած յանցաւոր խումբը գործել է յատուկ մշակւած սխեմաներով, եւ այդ սխեմաները աշխատում են նոյնիսկ տեղի ունեցած ձերբակալութիւններից յետոյ:

Ամերիկեան լրատամիջոցների փոխանցմամբ, հայկական յանցաւոր խմբաւորման ներկայացու-

ցիչ-  
նե-



րը մի շարք լայնածավալ գործողություններ են իրականացրել, մասնաւորապէս, կարողացել են գողանալ «99 սենթ» խանութների յաճախորդների տւեալները, որի օգնութեամբ նրանք կեղծ վարկային բանկային քարտեր են սարքել եւ վճարել այդ քարտերով խանութներում: Խմբաւորման ներկայացուցիչներին յաջողւել է բանկերից մէկում կաշառք տալով՝ յաճախորդների մասին տեղեկատւութիւն ստանալ եւ հետագայում 10 միլիոն դոլարի գողութիւն կատարել քարտերից: Սա ընդամենը խմբաւորման գործունէութեան օրինակներից մէկն է, նշել են ամերիկացի իրաւապահները: Ձերբակալածների հիմնական մասը բնակւել է Կալիֆորնիա նահանգում, որը Մոսկւայից յետոյ Ափիւռքում բնակւող հայերի ամենամեծ կենտրոնացման վայրն է: Դատախազ Անդրէ Բիրոտի խօսքով՝ հայկական մաֆիայի ներկայացուցիչները զբաղւել են իւրաքանչիւր տեսակի յանցաւոր գործունէութեամբ, որը շահոյթ է բերում: «Հայկական յանցաւոր խմբաւորման կառուցւածքը նման չէ, օրինակ, իտալական մաֆիայի կառուցւածքին, այստեղ չկայ մէկ ընդհանուր առաջնորդ», - նշել է Բիրոտը: Համաձայն ԱՄՆ պաշտօնեաների, յանցաւոր խմբի ներկայացուցիչները գործում են այն մոդէլով, որը գոյութիւն է ունեցել նախկին ԽՍՀՄ-ում, այն է՝ խմբաւորման մէջ եղել են «օրէնքով գողեր», որոնք համակարգել են խմբաւորման գործունէութիւնը Ռուսաստանում, Վրաստանում եւ Հայաստանում գոյութիւն ունեցող յանցաւոր խմբաւորումների հետ: «Հայկական ՌԺ» խմբաւորման ներկայացուցիչները գունեղ մակամուններ են ունեցել, այդ թւում՝ «Կապոնէ», «Հաստավիզ», «Կասպեր» եւ այլն: Բիրոտի խօսքով, հայկական մաֆիայի գործունէութիւնը հնարաւոր է եղել բացայայտել առաջնորդների միջեւ ծագած



ներքին խնդիրների շնորհիւ: Նշենք, որ ընդհանուր առմամբ մեղադրանք է առաջադրւել 113 մարդու, որոնցից 20-ից աւելին առայժմ յաջողւում է թաքնել:

ԱՄՆ Յետաքննութիւնների դաշնային բիւրոյի (FBI) հաղորդագրութեան համաձայն, «Հայկական ՌԺ» աւազակախմբի 70 յայտնի անդամների եւ նրանց յանցակիցների ձերբակալման գործողութիւնը տեղի է ունեցել դաշնային մակարդակով: Ձերբակալութիւնները կապւած են դաշնային երկու մեղադրական ակտերի հետ, եւ մեղադրանք է ներկայացւելու 100 ամբաստանեալների՝ առեւանգումների, շորթման, բանկային մեքենայութիւնների եւ թմրամիւքերի շրջանառութեան մեղադրանքներով: «Խումբը, թւում է, եկամուտ ստանալու համար պատրաստ է անել ամէն ինչ», - ասել է ԱՄՆ դատախազ Անդրէ Բիրոտ կրտսերը: Մեղադրեալների մեծ մասը գտնւում են Կալիֆորնիայում, սակայն իշխանութիւնները մեղադրանք են առաջադրել այլ նահանգներում բնակւող տասնեակ ուրիշ մարդկանց եւս:

Եօրք քաղաքներում ձերբակալւել էին հայկական յանցաւոր խմբի տասնեակ անդամներ, որոնք մեղադրւում են բժիշկների եւ հիւանդների գողացւած ինքնութեան տւեալների միջոցով պետական առողջապահական համակարգից անօրինական կերպով տասնեակ միլիոնաւոր դոլարների գումարներ յափշտակելու մէջ: Ձերբակալւածների մէջ էր կազմակերպւած յանցագործ խմբի պարագլուխ, «օրէնքով գող» Արմէն Ղազարեանը, որը, յայտնի լինելով դեռեւս խորհրդային տարիներից, ապահովել է յանցաւոր խմբի պաշտպանութիւնը: Միայն Նիւ Եօրքում դատախազները գործեր են յարուցել 44 անձանց նկատմամբ, որոնք «Մեդիքեր» պետական ապահովագրական կառոյցից յափշտակել են մօտ 100 միլիոն դոլար: ԱՄՆ իրաւապահների խօսքով, իտալական մաֆիան կը նախանձեր նշւած յանցաւոր խմբին:

Աղբիւր՝ «Հայկական ժամանակ» կայք Փետրւար 18, 2011

**3.9.** Անցած տարի Հոկտեմբերին ԱՄՆ-ում՝ Լոս-Անջելէս եւ Նիւ



1923 թվականին Թեհրանում լոյս տեսաւ Օմար Խայեամի, Բարաթահերի եւ այլ պարսկերէն բանաստեղծութիւնների հաւաքածոն հայերէնով: Թարգմանութիւնները կատարել էր Յովսէփ Ջ. Միրզայեանը, որը գրքի նախաբանում իր ակնարկները էր յայտնել այն մասին, թէ ինչու իրանահայերը դեռ չեն կարողացել խորապէս ճանաչել պարսիկ ժողովրդի մեծ մշակոյթը: 1963 թին, թարգմանչի զաւակ, բանաստեղծ Ջօրայր Միրզայեանը, հրատարակելով Օմար Խայեամի քառեակների իր հօր միջոցով կատարած թարգմանութիւնները, յարմար է գտել վերահրատարակել նաեւ գրքի «Ձօն Իրանահայութեան»-ը, եւ թարգմանչի ծաւալուն յօդածը Օմար Խայեամի աշխարհայեացքի մասին, որոնք, ըստ Ջօրայր Միրզայեանի, «... եւ ոչ մէկը չեն կորցրել իրենց այժմեականութիւնը»: Ստորեւ ներկայացնում ենք այդ յօդածից հատուածներ, եւ իրանահայերին ուղղած «Ձօն Իրանահայութեան»-ը:

## ՕՍԱՐ ԽԱՅԵԱՄԻ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔԸ (ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ)

### 3. Ջ. Միրզայեան

Խայեամի շօշափած փիլիսոփայութիւնը նորութիւն չէ: Նրանից առաջ, եւ մանաւանդ նրանից յետոյ, աշխարհային հանգամանքների անկայուն բնաւորութիւնը, կեանքի անարժէք եւ վաղանց յատկութիւնը պարսիկ հեղինակները բազմապիսի ձեւերով ու ոճերով երգել են, բայց նրանց մեծ մասը, եթէ չասեն ամբողջը, այդ մասին խօսել են որպէս գիտնականներ կամ քննադատներ, սակայն Խայեամն այդ միւթի համար մի ինքնայատուկ, զգայուն, մեղամաղձոտ եւ պատկերաւոր լեզու ունի: Նա մի քանի կարճ բառով այնպէս տիրապետում է ընթերցողի մտքին, որ նրան կատարելապէս համոզելով՝ իր տրամադրութեան իշխանութեան տակ է առնում: Յաճախ նրա տրամախոհութեան ձեւը այնքան գողտրիկ, եւ այդ քննաբանութիւնից առաջ բերած եզրակացումը այնքան հաճելիօրէն անակնկալ է, որ, կարծես թէ այդ յայտնութեան առաջ մարդ անձնատուր է լինում, եւ եթէ կարողանայ էլ՝ չի ցանկանում հակասել՝ մի գուցէ դրանով բեկանել այն դուրեկան հմայքը, որ բնափոխել է ընթերցողի զգացմունքն ընտիր բառերի վարպետ հիւսւածքի ազդեցութեան տակ:

Խայեամը յաճախ է պատճառաբանում, եւ տրամաբանութիւնը թէեւ զուտ մտքի ծնունդ է, եւ խօսում է մտքի հետ, բայց այս հազազգիտ տաղանդի գրչի տակ կարծես հրաշքով դարձել է զգացումներ յե-

ղաշրջելու, համակուում է կարծես ինչ-որ արբեցուցիչ միւթի ազդեցութեամբ:

Խայեամի միտքը վերին աստիճանի ազատ է եւ յանդուգն: Նա իր փիլիսոփայութեան ճշմարտութիւնն ապացուցելու համար մի քանի բառով փշրում է կրօնական շատ սկզբունքներ եւ սրբազանացած աւանդութիւններ:

Կրօնապետները նրա համար վարձկան կեղծաւորներ են եւ արիւնռուշտ մարդահալածներ:

*Մի կրօնապետ մի կնոջ ասաց.- «Չարբած ես, ո՞վ կիմ. ամէն բոլոր դու ամարգ հիւր ես մէկի հաճոյքին»:*

*Իսկ կիմն ասաց.- «Ո՞վ սուրբ մարդ, ինչ ասացիր, այդ կամ ես, բայց ինչ որ ցոյց ես տալիս, արդեօք դու էլ կա՞ս այդպէս:*

*Ո՞վ մեր քաղաքի արդար դատաւոր,  
Չես կարող լինել դու մեզ չափ աննենգ  
Եւ մենք անդադար հարբելով հանդերձ,  
Քեզնից աւելի ըզգաստ ու լուրջ ենք:*

*Խնում ենք մենք միշտ արիւնը որթի,  
Միշտ մարդկանց արեամբ հարբում ես միշտ դու:  
Անաչառ դատիր, արդեօք մեզանից  
Ո՞րն է աւելի վատ արիւնարբու:*

Իսկ կրօնքի արտաքինը ուրիշ բան չէ, եթե ոչ՝ մի սանձ՝ յիմարների եւ վայրենիների համար:

*Տօնն եկաւ, եւ այժմ մեր բանը լաւ է,  
Սաղին հին գինով կուժը կը լեցնի.  
Ծոնը՝ դնչակալ, եւ աղօթքը՝ սանձ՝  
Տօնն այս էշերի գլխից կը հանի:*

Նա նոյնիսկ չի քաշուում բանակուռի եւ վիճաբանութեան մէջ մտնել գերագոյն էակի հետ, եւ աւանդութիւնն ասում է, որ մինչեւ անգամ Աստուած ընդունեց նրա տրամաբանութեան ճշմարտութիւնը եւ նրա երեսի կէտը, որ սեւացրել էր, նրան պատշէլու համար, նորից սպիտակեցրեց:

Ահա այդ նշանաւոր քառեակը, որի պատճառով

Խայեամի կէս երեսը սեւացաւ:

*Անօթն իմ գինու, Տէ՛ր իմ, կոտրեցիր,  
Դուռը ցնծութեան գոցեցիր դէմքիս,  
Թափեցիր գինիս՝ վարդի պէս կարմիր,  
Հարբա՞ծ ես, Տէ՛ր իմ, հո՛ղը գայ բերնիս:*

Եւ ահա այն տողերը, որոնցով որպէս թէ նա ներում է խնդրում Աստուծոյց, եւ որոնց պատճառով դարձեալ նրա երեսը սպիտակում է եւ դառնում է առաջւայ նման:

*Ասա՛ ինձ խնդրեմ, ո՞վ է աշխարհում, որ մեղք չունենայ,  
Այն մահկանացուն, որ մեղք չգործեց, ինչպէ՞ս  
սպրեց նա,*

*Ես վատ եմ անում, եւ դու ինձ  
վատով պատժում ես, ո՞վ Տէր,  
Ասա՛ ինձ խնդրեմ, ապա ես եւ  
դու ինչո՞վ ենք տարբեր:*

Այս բառերով, ինչպէս տեսնում էք, Խայեամը ստորաքարշ ներդրութիւն չի խնդրում Աստուծանից, այլ հանդէս է գալիս ընդդիմախօսութեան հօգորութեամբ եւ արդարադատութեան պահանջի համարձակութեամբ:

Եւ սակայն չի կարելի ասել որ Խայեամի անվախ վերաբերմունքը դէպի գերագոյն էակը առաջ է գալիս նրանից, որ նա անհաւատ է կամ թերահաւատ: Խայեամն անպայման նրանցից է, որոնք մեծ արժէք չեն տալիս կրօնական կեղեւային սկզբունքներին եւ ծեսերին, բայց ինչ վերաբերում է Աստծուն, նա խորապէս երկիւղած է, եւ վստահօրէն կարելի է ասել, որ նրա յանդուգն ոճը Աստծոյ հետ խօսելիս աւելի շատ հիմնուած է անխախտ հաւատքի վրայ քան անհաւատութեան:

Նա Աստծոյ առաջ ներկայանում է եւ իր դատը փաստաբանում ինչպէս սահմանադրական երկրի մի քաղաքացին կը ներկայանար իր Վեհապետի առաջ, իր իրաւունքներին գիտակից մարդու նման, որ պաշտպանուած է անսասան օրէնքների անխորտակելի պատմէշներով:

# ՉՕՆ

## Իրանահայութեան

Սիրելի հայրենակիցներ,

Իմ անկեղծ ափսոսանքը միշտ եղել է այն, որ պարսկահայութիւնը- ընդհանրապէս առած- դարեր շարունակ ապրած լինելով Իրանում, դեռ չի կարողացել խորապէս ճանաչել պարսիկ մեծ ժողովրդի մտաւոր առաւելութիւնները:

Որպէսզի մասամբ հասած լինեմ իմ նպատակին եւ ծանօթացնեմ ձեզ պարսկական խորաթափանց մտքի արտադրած բազմաառաւ ու մեծարժէք մարգարիտներից մի քանիսի հետ, որպէսզի աւելի եւ աւելի մերձեցնան առիթներ ու հակումներ ստեղծեն հայ ու իրանցի ժողովուրդների միջեւ, որպէսզի ցոյց տուած լինեմ իմ հիացմունքը դէպի մեր պարսիկ հայրենակիցների գրական-գեղարւեստական բարձր արժանիքները, եւ վերջապէս, որպէսզի յայտնած լինեմ իմ սէրն ու յարգանքը դէպի երկու ժողովուրդներն էլ, պարսկական բանաստեղծութեան աննման ու մեծաճիւղ բուրաստանից քաղած մի վարդ նւիրում եմ ձեզ:

1923, Թեհրան

Նա հպատակը չէ՛ մի ինքնակալ բռնապետի, որ չգիտե որպիսի՝ քմահաճ եւ անակնկալ պատիժների կարող է դատապարտել թագաւորի կողմից:

Ուրիշ ի՞նչ ձեւով կարելի է ըմբռնել այս տողերը.

*Եթէ ես մեղք չը գործեմ, Աստուծոյ գութին ի՞նչ կարիք  
Շնորհիւ մեղքիս է միայն, որ գութն ունի արժանիք:*

*Աստուած, որպէս մի վարդի, պճնեց ու մեզ հոգ տարաւ,  
Գիտէր թէ մեր գործերից ի՞նչ դուրս կը գայ- վատ ու լաւ:  
Կա՞յ մի յանցանք, որ գործենք առանց Նըրա հրամանի,  
Ապա ուրկի՞ց դուրս եկաւ հուրն ու տանջանք գեհե՞նի:  
Յարիւր տարի իբրեւ փորձ, մեղք կը գործեմ ես ազատ,  
Կան՛, գութք է շատ իմ մեղքից, կան՛ քո գութից մեղքս է շատ:*



Ինչպէս պարզ երեւում է այս տողերից, նա մի անդրդելի հաւատք ունի դէպի Աստուծոյ ամենողորմութիւնը, եւ հէնց այդ պատճառով նա չի կարողանում մի բոլորէնքադրել, որ այդ անհուն գութը կարող է ընկճել կամ պարտել բանաստեղծի հարիւր տարւայ սահմանափակ մեղսագործութիւնից, թէկուզ դիտմամբ էլ արւած լինեն նրա յանցանքները, եւ նրան յանձնել յաւիտեանական գեհե՞նի հուրին: Մանաւանդ, որ Անեմախիմաստունը- որին նա դարձեալ խորապէս հաւատացած է- գիտէ թէ բանաստեղծը մեղք է գործելու:

*Ամենագէտըն ըսկզբից գիտէր կը խմեն գինի,  
Եթէ չը խմեն Նըրա գիտութիւնն անճիշտ կը լինի:*

Նա աւելի առաջ է գնում, ընդունելով Աստուծուն իբրեւ իր արարիչը եւ ասում.-

*Ես ի՞նչ անեմ, շաղախել ես Դո՛ւ կաւն իմ  
Ես ի՞նչ անեմ, Դո՛ւ ես գործել կտաւն իմ*

*Ի՞նչ լաւ ու վատ, որ ինձանից է գալիս,  
Ես ի՞նչ անեմ, դու ես գրել ճակատիս:*

Պաշտպանելով իր իրաւունքը գթառատութեան գահի առաջ պատժազերտ մնալու համար, նրա մտքի տրամադրութիւնը դէպի այդ յաւիտեանական ողորմածութիւնը, եւ սակայն, չէ անպատկառ կամ ըմբոստ: Ո՛չ, նրա մտքի գերազանց ճկունութիւնը կայանում է նրա մէջ, որ իր տկարութիւնը հզօր գէնք դարձրած՝ դատաւարութեան մէջ է մտնում իր Ստեղծողի հետ:

Նա թէւ ինքն իրեն արդարացնում է, բայց եւ այնպէս նրա յաղթութիւնը գուրկ է փառքից եւ պարծանքից: Ընթերցողը գուցէ կարողանայ սքանչանալ նրա համճարի վրայ, որ նա մեղքը եւ թուլութիւնը - երկուսն էլ դատապարտելի եւ պարտելի թերութիւններ - միջոց է դարձնում իր ձեռքում փայլուն կերպով իր իրաւացիութիւնը ապացուցելու համար, երբ ներկայանում է հաշւետւութեան օրը: Բայց ինքը, բանաստեղծը ամաչում է իր տարած յաղթանակից:

*Ասենք թէ դու ներեցիր՝ ասածս ամէն քեզ ընդդէմ,  
Այն ամօթից, որ գիտես ի՞նչ եմ արել՝ ի՞նչ անեմ:*

Թէւ ինչպէս վերն ասացինք խայեանը թերահաւատութեամբ է վերաբերում դէպի մահմեդականութեան ուղղափառ դոգմաները եւ ոչ միայն յարգանք չունի դէպի կրօնի ընչաքաղց ու մարդահալած վարդապետները, բայց ինքն ունի մի հաստատուն դաւանանք եւ ահա՛ նրա հաւատամքը.

*Աստուած է հոգին համայն տիեզերքի,  
Տիեզերքը համայն՝ մարմինը Նըրա  
Դասերն ու կարգերն հըրեշտակների  
Ըզգայարանն են այդ կազմի հսկայ:  
Երկինքը տարերք, եւ անդամներն էլ  
Թագաւորութիւնն են այդ բնութեան:  
Միաստուածութիւնն հէնց այս է, որ կայ,  
Եւ խաբէութիւն՝ ամէն ուրիշ բան:*



# ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆ

## ՄԿՍՈՒՄ ԵՍ ԴԱՆՂԱԴ ՄԱՀԱՆԱԼ

Փարլո Ներուդա

Սկսում ես դանդաղ մահանալ  
Եթէ չես ճամբորդում  
Եթէ գիրք չես կարդում  
Եթէ կեանքի հնչիւններին չես ունկնդրում  
Եթէ ինքդ քո արժանիքները չես գնահատում

Սկսում ես դանդաղ մահանալ  
Երբ քո նկատմամբ հաւատքդ քո մէջ սպանում ես  
Երբ թոյլ չես տալիս ուրիշները քեզ օգնեն

Սկսում ես դանդաղ մահանալ  
Եթէ սովորութիւններիդ ստրուկն ես դառնում  
Եթէ անընդհատ նոյն կրկնող ճանապարհով ես քայլում  
Եթէ առօրեադ չես փոխում  
Եթէ զանազան գոյների հագուստներ չես հագնում  
Ու անձանօթների հետ չես զրուցում

Սկսում ես դանդաղ մահանալ  
Եթէ խուսափում ես կրքերից  
Ու ալեկոծ զգացմունքներից  
Այն բոլորից, որոնցից աչքերդ փայլում են  
Եւ սրտիդ զարկը արագանում

Սկսում ես դանդաղ մահանալ  
Եթէ աշխատանքդ կամ սէրդ քեզ չեն բաւարարում, եւ դրանք չես փոխում  
Եթէ չես վտանգում այն, ինչ ապահով է, անվստահելիի համար





Եթէ երագներդ իրականացնել չես փորձում  
 Եթէ քեզ թոյլ չես տալիս  
 Գոնէ մէկ անգամ քո կեանքում  
 Ականջ չդնել խելացի խորհուրդներին

Հէնց Այսօրանից սկսիր ապրել  
 Հէնց այսօրանից սկսիր վտանգներին ընդառաջ գնալ  
 Հէնց Այսօր մի բան արա  
 Թող որ չսկսես դանդաղ մահանալ

**Թարգմանչի ծանօթագրութիւն**

Բանաստեղծութեան վերջին չորս տողերը իրականում Ներսիսյանինը չեն: Բանաստեղծութիւնը տարիներ առաջ պարսկերէնի է թարգմանել պարսիկ անանի բանաստեղծ Ահմադ Շամլուն: Ես էլ առաջին անգամ այն կարդացել եմ պարսկերէնով ու թարգմանել հէնց պարսկերէնից: Յետոյ, երբ գտայ նաեւ բանաստեղծութեան անգլերէն թարգմանութիւնը, իմացայ, որ վերջին տողերը աւելացրել է Շամլուն: Յամենայն դէպս, դրանք այնքան էին համընկնում իսկական գործի շնչին, որ մտածեցի հէնց այդպէս էլ թողնեն: Ի վերջոյ, մեծութիւնները իրաւասու են աւելի ազատ թարգմանել:

*Ռ.Ս.*

Մտնում ես դահլիճ: Դահլիճը դատարկ է, բենի վարագոյրները համարեա փակ: Փոքրիկ անցքի միջից ներս ես մտնում բեն: Փաստօրէն դու էլ ես բենում: Դու էլ ես խաղում, ոչ մասնակցում ես, հրաւիրում՝ նստելու բենահարթակում տեղաւորւած սեղաններից մէկի մօտ: Դու կաֆէում ես, մենին արդէն սեղանին է եւ նստելուդ պէս քեզ հրամցնում են գինի:

Բոլորս էլ կաֆէներ յաճախում ենք: Այնտեղ կարող ես հանդիպել տարբեր տեսակի մարդկանց. Սիրահարւած զոյգեր, սիրախաբւած ամուրիներ, ամուսիններ եւ վերջապէս մենակ մարդիկ:

Նայած թէ որտեղ ես նստած ականայից ունկնդիրն ես լինում յարակից սեղանների խօսակցութեանը: Ամուսինների վեճերին, ընկերուհիների բամբասանքներին, իսկ երբեմն էլ մենակ նստած մարդկանց լուռ մտորումներին, որ ինչպէս ասում է Վիրջինիա Վուլֆը աչքները յառել են կեանքին. ու թէեւ դա անծայն է, բայց աւելի բարձր է հնչում քան միւս բոլոր խօսակցութիւնները.

Դու էլ պատկանում ես այդ խմբերից մէկին, գուցէ եւ բոլորին:

Ի տարբերութիւն քաղաքում ցրւած կաֆէներում տիրող մթնոլորտին այս թատերական կաֆէի սեղանների շուրջ նստածները ամուսնացած լինեն թէ ոչ, մենակ լինեն թէ ընկերներով, բոլորը նայում են նոյն բանին, չնայած չգիտենք արդեօք միեւնոյն բանն են տեսնում թէ ոչ. բայց այդ հարցի պատասխանն էլ գտնում ես, երբ սկսում է ներկայացումը, կամ երբ բոլորը միասին ականատես էք լինում կաֆէի կենտրոնական մասում ընթացող զոյգի ընդհարումներին:

Եթէ մենակ սուրճի գաւաթի վրայ կորացած, կամ մայթեզրեայ կաֆէից մայթում անցնողների քայլարշաւը դիտելու ընթացքին քո գլխում պտտող խօսակցութիւններն ու վերլուծումները ունեն բաւականին դրամատիկ, նոյնիսկ ողբերգական հնչեղութիւն, այս-



## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԿԱՖԵՈՒՄ «ԱԳԱՏ ԶՈՅԳ» ՆԵՐԿԱՅԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայնուշ Չահանեան

Վերջերս Երեւանում ներկայացւել է իտալացի անւանի թատերագիր Դարիօ Ֆոյի «Ագատ Չոյգ»-ը: Բեմադրիչն է իրանա-ֆրանսահայ Մերգէյ Մելիք-Յովսէփեանը, որն այժմ ապրում եւ ստեղծագործում է Երեւանում: Սա Մելիք-Յովսէփեանի 5-րդ բեմադրութիւնն է: Հայնուշ Չահանեանը, որ նոյնպէս իրանահայ է եւ այժմ երկար տարիներ է, ինչ ապրում է Երեւանում, հետեւեալ յօղւածում գրել է կաֆէում բեմադրւած Ֆոյի թատերգութեան ներկայ գտնւելու իր փորձի մասին:

տեղ, այս թատերական կաֆէի կենտրոնում գտնուող զոյգի վեճը լսելիս ու տեսնելիս, որն իրենց բովանդակութեամբ եւ մտահոգութիւններով շատ են նման քո անցած գիշերւայ կամ կեանքի ինչ-որ ժամանակաշրջանում ունեցած մտահոգութիւններին կամ գայթակղութիւններին, դու անակնկալի ես գալիս քո իսկ ծիծաղի ձայնից. Դու իրենցից համարեա մի քանի քայլ ես հեռու լսում ես նրանց մէկը միւսի ականջին (քո ականջից հեռու) ասւած շշուկները, տեսնում ես տղամարդու բերանի աջ անկիւնում շարժուող ջիղի աննշան շարժումը. բայց թւում է թէ քեզ եւ իրենց մէջ մի մեծ տարածութիւն կայ եւ դա քեզ թոյլ է տալիս այդքան անհոգ ու անզուսպ հրեռալ այդ խեղճ զոյգի երէկ շատ խղճուկ թւացող մտահոգութիւնների վրայ:

Մէկ էլ զգում ես, որ կաֆէում հրամցնում են ոչ թէ սուրճ, ոչ թէ

կարկանդակ, այլ քեզ, բացէիբաց դուած, ինչպէս զոհը զոհասեղանին եւ դու ծիծաղում ես քո, ոչ ուրիշի ծիծաղելի դժբախտութեան վրայ, որն է «զոյգ» լինելու գաղափարը կամ փաստը, եւ ինչպէս բենի, ոչ, կաֆէի կենտրոնում գտնուող զոյգի առաջարկած դեղատոմսը կամ միզուցէ համաճարակը «Ագատ զոյգ» հակասական հասկացողութեանը:

Թատերգութեան իտալերէն անւանումն է «Բաց զոյգ, համարեա լայն բաց» (Coppia aperta quasi spalancata) եւ անգլերէնով «Բաց զոյգ» (Open couple), որը կարելի է անւանել ազատամիտ (Open minded): Բայց ամբողջ խնդիրը այդ ազատութեան սահմանները ճշտելն է:

Բրագիլական սերիալներից մէջբերումը այդ սահմանների իրական լայնացման չափերին է ակնարկում, երբ դու միեւնոյն պահին դառնում ես քո ամուսնու



կինը ու քոյրը:

Ներկայացման դինամիկան ապահովում է կնոջ դիմակայութիւնը ամուսնու անհաւատարմութիւններին, որտեղ մէկ անյուսութիւնից դրուած փորձում է ինքնասպան լինել, եւ որը աւելի ծիծաղելի վիճակի մէջ է յայտնուում եւ կամ ձեռնարկում է տարբեր ծայրայեղական քայլեր «ազատ զոյգ» գաղափարախօսութեանը իր ներդրումն անելու, ի վերջոյ երբ սկսում է աշխատել եւ տնտեսապէս իր ոտքին կանգնել ձեռք է բերում իրական անկախութիւնը, եւ որը յանգում է նորանոր ծանօթութիւնների, որոնցից է ատոմային գիտութիւնների դոկտորի հետ հաստատած կապը:

Այս անգամ ամուսինն է ինքնասպանութեան փորձեր ձեռնարկում, որը կրկին ոչինչ չի կորզում բացի հանդիսատեսի ծիծաղից, եւ ի վերջոյ կինը թողնում է ամուսնուն հաստատելու մի նոր «ազատ զոյգ» պրոֆեսորի հետ: Իրականում «ազատ զոյգ» միաւորումը տղամարդու կողմից իր սեռական ոտնձգութիւններին օրինական լուծում տալու նախաձեռնութիւնն է, եւ որից հէնց ինքը տղամարդն է ծուղակն ընկնում, քանզի ազատութիւնը ոչ միայն ինքն իրեն ազատութեան հնարաւորութիւն տալն է, այլ նաեւ դիմացինի ազատութիւնը ճանաչելը եւս:

Սոյն բեմադրութիւնը՝ 1983 թւականին Ֆօ-ի բեմադրութեամբ, մեծ սկանդալ է առաջացնում, եւ իտալական ցենզուրայի եւ կաթոլիկների կողմից նախատում է:

